ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Հայ դատի հանձնախումբը (ՀԴՀ, անգլերեն անվանումը՝ Armenian National Committee) ՀՀԴ կուսակցության քաղաքական աշխատանքների և կառավարական հարաբերությունների ազգային հանձնախումբն է: Հիմնվել է 1941-ին, Նյու Յորքում: Այնուհետև անջատ հանձնախմբեր են կազմվել ամենուրեք, որտեղ ՀՀԴ-ն իր կառույցներն ունի: ՀԴՀ-ն պաշտպանում է հայ ժողովրդի պահանջներն ու ազգային ձգտումները, ներկայացնում հայության տեսակետները բոլոր մակարդակներով՝ իր գլխավոր խնդիրը համարելով հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը: ԱՄՆ-ում ունի երկու հիմնական բաժանմունք՝ Արևելյան և Արևմտյան: Տնօրենների խորհուրդները հարաբերություններն իրականացնում են դաշնային, իսկ մասնաճյուղային խորհուրդները՝ շրջանային մակարդակով: Հանձնախումբը գրասենյակներ ունի Վաշինգտոնում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, ԱՄՆ-ի մյուս հայաշատ քաղաքներում: ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի նախագահն է Քեն Խաչիկյանը:

Ըստ հանձնախմբի որդեգրած ուղեգծի՝ Հայ դատը կամ ավելի լայն առումով՝ Հայկական հարցը, մի համաժողովուրդ է, որն ունի քաղաքական, տարածքային, բարոյական, սոցիալ-տնտեսական և իրավական հայեցակետեր: Ելնելով հայ իրականության այժմյան վիճակից, երբ Հայաստանի Հանրապետությունում և Կովկասի հայաբնակ շրջաններում ապրում է հայ ժողովրդի գրեթե կեսը, մյուսը՝ հետխորհրդային տարածքի տարբեր վայրերում ու աշխարհի շատ երկրներում, իսկ հանրապետության տարածքը զբաղեցնում է Սևրի պայմանագրով (1920) ճանաչված և ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի գծած սահմաններով հայկական հողերի միայն 1/6 մասը, երբ բռնագրավված Արևմտյան Հայաստանն ամայի ու դատարկված է մնում իր բնիկ բնակչությունից (մինչդեռ սփյուռքահայերն իրենց ինքնությունը կորցնելու մշտական վտանգի տակ են), թուրքական կառավարությունը նպատակամղված փորձում է ջնջել Արևմտյան Հայաստանում հայերի պատմական ներկայության ամեն մի հետք (պատմական հուշարձանների ավերում ու դրանց պատկանելության խեղաթյուրում), երբ միջազգային իրավունքը 1915-ին սկսված Հայոց ցեղասպանությունը ճանաչում է որպես շարունակվող հանցագործություն, ՀԴՀ-ն գտնում է, որ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանը պետք է միավորվեն մեկ միացյալ հայկական պետության մեջ: Այն պետք է ընդգրկի նաև հայկական այն տարածքները, որոնք խորհրդային իշխանության օրոք արհեստականորեն անջատվել են այսօրվա Հայաստանից: Հայկական հարցի լուծումը պահանջում է ոչ միայն գոհացում ու հատուցում ցեղասպանության կամ հայերի կորուստների համար, այլև ազատ և ժողովրդավարական պետության ստեղծում:

ՀԴՀ-ի քաղաքական գործողությունների և կառավարական կապերի բաժինը օժանդակում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ստեղծմանը տեղական, դաշնային և միջազգային մակարդակներով, ուշադրություն հրավիրում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի խախտումների վրա: Կարևոր ձեռքբերումներից են Հայոց ցեղասպանության վերաբերյալ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձևը (1984) և Լեռնային Ղարաբաղի մասին Սենատի հանձնարարականը (1989): Կալիֆորնիայում նահանգային իշխանությունների որոշմամբ՝ 1990-ից ապրիլի 24-ը նշվում է որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Նահանգի հանրային դպրոցներում մտցվել են Հայոց ցեղասպանության դասընթացներ, կազմվել են ուսուցիչների ուղեցույցներ և տրամադրվել են համապատասխան նյութեր: Կազմվել են դասագրքեր («Հայ դատ») հայկական դպրոցների համար: Հանձնախումբը ֆինանսավորել է ցեղասպանության մասին կինոֆիլմերի արտադրությունը, ցույցեր ու հանրային այլ միջոցառումներ կազմակերպել Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ՝ դատապարտելով Հայոց ցեղասպանությունն ու ջարդերը այդ երկրներում, Արցախի ու Հայաստանի շրջափակումը:

ՀԴՀ-ի լոբբիստական գործունեության կարևոր ուղղություններից է ԱՄՆ-ի բյուջեի մեջ Հայաստանի և Արցախի համար տնտեսական և ռազմական օժանդակություն ապահովելը: ՀԴՀ-ն աշխատանք է տա-

խագահն է Հակոբ Յափուջյանը) կից ստեղծված են կրթական, տնտեսական, հրատարակչական, դասագրքերի, շինարարական, ռադիոժամի հանձնախմբեր: Գործում են աշխարհագրական սկզբունքով կազմված՝ Լիբանանի, Սիրիայի, Հունաստանի, Կիպրոսի, ԱՄՆ-ի (Արևելյան և Արևմտյան), Կանադայի, Ավստրալիայի, Ֆրանսիայի, Հայաստանի շրջանային վարչությունները (շուրջ 50 մասնաճյուղ):

1990-ին Հայաստանում ստեղծվել է Համազգայինի ներկայացուցչություն, ապա՝ վարչություն: Վարչության (նախագահ՝ Ռ.Դավոյան) նախաձեռնությամբ համագործակցության պայմանագրեր են կնքվել Երևանի պետական համալսարանի և Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկի, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի և Բեյրութի Բարսեղ Կանաչյան երաժշտանոցի միջև: Հայաստանում գործում է «Համազգայինի թատրոնը» (ղեկավար՝ Սոս Սարգսյան), Ախալցխայում Համազգայինը հիմնել է երաժշտական դպրոց, Շուշիում հովանավորում է Արամ Մանուկյան վարժարանը, Երևանում՝ Խրիմյան Հայրիկի անվան դպրոցը: